Կազմված է 15.08.2016 թ. և
բաղկացած 21 էջից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍՊԸ
մասնակիցների *15.08.2016 կայացած ժողովի*
կողմից
(արձանագրություն թիվ 12)

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍՊԸ

տնօրեն

Ը. Մակիչյան

15.08.2016թ.

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Օրինակ «1»

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 30.07.1996թ.
գրանցման թիվ 273.110.01549
վկայական 01Ա027572
ՀՎՀՀ 01515952
10.05.2007թ. գրանցված կանոնադրության
001.2 փոփոխությունը գրանցված է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

"06" _____ 2016 թ

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2016

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հյուսիսային համալսարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
2. «Հյուսիսային համալսարան» ՍՊԸ (հետագա տեքստում՝ համալսարան) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կրթական և գիտահետազոտական ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար, մանկավարժական և տեխնիկական գիտությունների ուղղությունով կրթության, հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և լրացուցիչ կրթության մակարդակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:
3. Համալսարանը իր գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության համապատասխան:
4. Համալսարանը իրավունք ունի իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և լրացուցիչ կրթության կազմակերպում.
2) գիտահետազոտական աշխատանքների իրականացում.
3) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում.
4) գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում.
5) օտարերկյա քաղաքացիների նախապատրաստական և բարձրագույն կրթության կազմակերպում.
6) համակարգչային ծրագրերի, հաշվապահական և օտար լեզուների ուսուցման կազմակերպում.
7) հանրակացարանաբնակ ուսանողների կենցաղի կազմակերպում և սպասարկում.
8) սովորողների և աշխատողների սննդի, հանգստի կազմակերպում:

5. Համալսարանը ունի ՀՀ զինանշանի պատկերով ու իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և անհատականացման այլ միջոցներ:
6. Համալսարանի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
2) հայերեն կրճատ՝ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍՊԸ
3) ռուսերեն լրիվ՝ Общество с Ограниченной Ответственностью «СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ»
4) ռուսերեն կրճատ՝ «СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ» ООО
5) անգլերեն լրիվ՝ «NORTHERN UNIVERSITY» Limited Liability Company

6) անգլերեն կրճատ՝ «NORTHERN UNIVERSITY» LLC
7. Համալսարանի գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0025, Ալեք Մանուկյան փողոց, 15 շենք, բնակարան՝ 9:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

8. Համալսարանի առաքելությունն է՝ կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ գիտակրթական գործունեության իրագործում՝ ուղղված տնտեսագիտության, կառավարման, հաշվապահության, իրավաբանության, ծրագրավորման, լրագրության, բանասիրության, հոգեբանության, կրթության և մանկավարժության ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստումը:
9. Համալսարանի գործունեության հիմնական նպատակն է՝
1) Հայ հասարակության ներքին պահանջների արժևորմամբ ու շուկայի կարիքների հաշվառմամբ և բարձրագույն մասնագիտական կրթության միջազգային փորձի ու սեփական նախաձեռնությունների զուգակցմամբ բարձրորակ կադրեր պատրաստել առավել հեռանկարային մասնագիտությունների գծով.
2) կրթադաստիարակչական գործունեության միջոցով ապահովել ուսանողների հայրենասիրական ոգու դաստիարակումն ու ամրապնդումը, նպաստել մարդասիրության, ժողովրդավարության գաղափարների, հասարակության բարոյական, մշակութային և գիտական արժեքների արմատավորմանն ու տարածմանը.
3) ուշադրության կենտրոնում պահել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական ներուժի զարգացումը, համալսարանի դասախոսների կատարելագործման խնդիրները ոչ միայն մասնագիտական, այլև օտար լեզուների, համակարգչային հմտությունների և նորարարական մեթոդների ներդրման ուղղությամբ.
4) քայլեր ձեռնարկել օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապերի ընդլայնման ու սերտացման և բուհի միջազգայնացման ուղղությամբ՝ արտաքին հարաբերությունների ոլորտում առաջնային համարելով հայ-ռուսական կրթամշակութային կապերը.
5) քայլեր ձեռնարկել, որպեսզի որևէ ուսանողի ցանկությունը՝ սովորել Հյուսիսային համալսարանում չխոչընդոտվի ֆինանսական կամ այլ արգելքով, և կրթության ընթացքում որևէ ուսանողի առաջընթացն ու ձեռքբերումները չընդատվեն ֆինանսական դժվարությունների պատճառով.
6) կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.
7) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.
8) բնակչության շրջանում գիտելիքի տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը:
10. Համալսարանի իրավասությունն է՝

1) իրականացնելու բարձրագույն, հետբուհական կրթություն, ինչպես նաև հանրակրթական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրերում.
2) ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքներով իր ինքնավարության իրականացումը.
3) ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում ինքնուրույնությունը.
4) ըստ կրթական ծրագրերի՝ կազմակերպելու դիմորդների, այդ թվում օտարերկյա քաղաքացիների ընդունելությունը և ուսումնական գործընթացը.
5) որոշելու իր կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը, օրենքով սահմանված կարգով ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաև ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու նրանց մասնակիցը.
6) ինքնուրույն որոշելու բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնելու աշխատողների ընտրությունը, նշանակումը, բաշխումը և ատեստավորումը, ներառյալ գիտամանկավարժական համակազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական համակազմի գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը.
7) մշակելու ընտրովի պաշտոնների և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգերը և անցկացնելու դրանք.
8) սահմանելու և շնորհելու համալսարանի պատվավոր կոչումներ, շքանշաններ, մեդալներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ.
9) վճարովի կրթական ծառայությունների (վճարովի ուսուցում և այլն) իրականացումը.
10) ֆինանսների կառավարումը՝ ներառյալ աշխատավարձի, կրթաթոշակի վճարումը, ուսման վարձի փոխհատուցումը, ուսանողական նպաստների տրամադրումը, համալսարանի պահպանմանն ու զարգացմանը և գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը.
11) սեփականության կամ օգտագործման նպատակով իրեն պատկանող գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարձակալության հանձնելը.
12) կնքելու պայմանագրեր և համաձայնագրեր հանրապետության և օտարերկյա համալսարանների, գիտական հիմնարկների, գիտակրթական կենտրոնների, պետական մարմինների, այլ կազմակերությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, սահմանված կարգով օտարերկյա պետություններում ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ և այլն.
13) օրենքով չարգելված այլ գործունեության իրականացումը:

11. Համալսարանում չեն թույլատրվում հասարակական-քաղաքական, հասարակական և կրոնական կազմակերպությունների, դրանց կազմակերպական կառույցների ստեղծումն ու գործունեությունը՝ բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական և շրջանավարտների կազմակերպությունների և միությունների:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Համալսարանի կառավարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման հիման վրա:
13. Համալսարանի կառավարման մարմիններն են՝
1) համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովը.
2) համալսարան գիտական խորհուրդը.
3) համալսարանի ռեկտորը. (գործադիր մարմնի ղեկավարը):
14. Անձը համարվում է մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու պահից: Մասնակիցները կարող են փոփոխվել Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու կամ այն բռնագանձելու դեպքում: Համալսարանը չի կարող որպես միակ մասնակից ունենալ մեկ անձից կազմված այլ տնտեսական ընկերություն:
15. Համալսարանի յուրաքանչյուր մասնակից ժողովում ունի համալսարանի կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:
16. Ժողովի իրավասությունները, ինչպես նաև ժողովի ձևավորման և գործունեության կարգը, նրա անդամների լիազորությունների դադարեցման կարգը, ժողովի նախագահի իրավասությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և համալսարանի ներքին նորմատիվ փաստաթղթերով:
17. Համալսարանի մասնակիցները իրավունք ունեն՝
1) Օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել համալսարանի կառավարմանը՝ ներկա գտնվել մասնակիցների ժողովին, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս.
2) ստանալ համալսարանի գործունեությունից շահույթի մասը.
3) համալսարանի լուծարման դեպքում ստանալ շահույթի իր մասը, պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը.
4) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ համալսարանի գործունեության մասին՝ գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, համալսարանի գործունեության այլ փաստաթղթերի հետ.
5) ցանկացած պահի դուրս գալ համալսարանի մասնակիցների կազմից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից)
6) հայցով դիմել դատարան՝ համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումները բողոքարկման նպատակով.
7) համալսարանի գույքի հաշվին համալսարանի կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր.
8) օգտվել օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
18. Համալսարանի մասնակիցները պարտավոր են՝
1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ համալսարանի կանոնադրական կապիտալում.

2) կատարել համալսարանի նկատմամբ ստանձնած պարտավորությունները.
3) պահպանել սույն կանոնադրության դրույթները:

19. Համալսարանի կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.

20. Համալսարանի մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ օրենքով չարգելված ձևով, օտարել համալսարանի մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ համալսարանի կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն:
Եթե համալսարանի մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ իրավունքը օգտագործել են մասամբ ապա համալսարանը ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:
Մասնակիցների, ինչպես նաև համալսարանի կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց:
Օրենքով նախատեսված բաժնեմասերը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

21. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով համալսարանն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասերը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով համալսարանի կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

22. Նախապատվության իրավունք (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

23. Համալսարանի կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են համալսարանի մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին առանց համալսարանի մնացած մասնակիցների համաձայնության: Ընդ որում ժառանգի (իրավահաջորդի) բաժնեմասից հրաժարվելու դեպքում դրա վճարումը կատարվում է սույն կանոնադրության սահմանված կարգով:

24. Համալսարանի մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) համալսարանի առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել համալսարանի այլ մասնակցի հեռացումն համալսարանից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում համալսարանի բնականոն գործունեությունը:
Համալսարանից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է համալսարանին: Համալսարանը պարտավոր է հեռացված մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

25. Համալսարանից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է համալսարանին:
Համալսարանի մասնակցի՝ համալսարանից դուրս գալու հետ կապված հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով.

- վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասը (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը,

- բաժնեմասի արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելը պահին համալսարանի վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա,
- մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք՝ ընդհանուր ժողովի որոշմամբ,
- եթե համալսարանի կանոնադրական կապիտալում որպես ավանդ մասնակցի կողմից ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա համալսարանն այն պահպանում է մինչև օգտագործման իրավունքի ավարտը,
- մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացած շահույթը: Համալսարանը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը համալսարանից դուրս գալու մասին դիմում ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում:

26. Համալսարանի մասնակիցն իրավունք ունի իր սեփականությունը հանդիսացող բաժնեմասը (դրա մասը) գրավ դնել համալսարանի մեկ կամ մի քանի մասնակիցների և երրորդ անձանց: Գրավի իրավունքը ծագում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրավի իրավունքի գրանցման պահից: Գրավ դրված բաժնեմասի (դրա մասի) վրա բռնագանձում տարածելու դեպքում համալսարանի մյուս մասնակիցները և համալսարանը օգտվում են բաժնեմասը (դրա մասը) ձեռք բերելու նախապատվության իրավունքից Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

27. Համալսարանի մասնակիցների ժողովը հրավիրվում է համալսարանի ռեկտորի կողմից յուրաքանչյուր ուսումնական տարում առնվազն մեկ անգամ, արտահերթ ժողով կարող է տեղի ունենալ յուրաքանչյուր մասնակցի նախաձեռնությամբ:

28. Ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ոչ ուշ, քան քսան օր առաջ այդ մասին ծանուցել ժողովի բոլոր մասնակիցներին:

29. Համալսարանի մասնակիցների ժողովը՝

1) ժողովը համալսարանի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք ունի.
2) փոփոխություններ ու լրացումներ կատարել համալսարանի կանոնադրության մեջ.
3) հաստատել համալսարանի կանոնադրությունը նոր խմբագրմամբ.
4) ընդունել համալսարանի վերակազմակերպման, միավորման, միաձուլման և լուծարման մասին որոշումներ.
5) լուծարման դեպքում նշանակել համալսարանի լուծարման հանձնաժողով, հաստատել լուծարման հաշվեկշիռները (այդ թվում նաև միջանկյալ և ամփոփիչ հաշվեկշիռները).
6) հաստատում է համալսարանի բյուջեն.
7) ավելացնում կամ նվազեցնում է կանոնադրական կապիտալի չափը.
8) հաստատում է համալսարանի տարեկան հաշվապահական հաշվեկշիռը.
9) ընդունում է որոշում համալսարանի ձեռք բերած շահույթը և կրած վնասները հիմնադիրների միջև բաշխելու վերաբերյալ.
10) ընդունում է որոշում համալսարանի կողմից արժեթղթերի (պարտատոմսերի) թողարկման մասին.
11) որոշում է ընդունում ընկերության գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքներ (խոշոր է կոչվում այն գործարքը, որի առարկայի արժեքը կնքման պահին գերազանցում է համալսարանի զուտ ակտիվների մեծության մեկ քառորդը) կատարելու մասին.
12) հիմնադրել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ.

13) հաստատում է համալսարանի մասնաճյուղի (մասնաճյուղերի) և այլ առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև համալսարանի կողմից հիմնադրվող հիմնարկի (հիմնարկների) կանոնադրություններ և այլ հիմնադիր փաստաթղթերը.
14) ձևավորում է համալսարանի գործադիր մարմինը.
15) լսում է համալսարանի տարեկան հաշվետվությունը:
30. Հյուսիսային համալսարանի գիտական խորհուրդը (այսուհետ գիտական խորհուրդ) ձևավորվում է սույն կանոնադրության համաձայն: Այն համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:
31. Գիտական խորհուրդը գործում է ռեկտորի նախագահությամբ: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 3 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 4 անգամ:
32. Գիտական խորհուրդը ձևավորվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների (ուսանողներ, ասպիրանտներ) և մասնակիցների ներկայացուցիչներից:
33. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, մասնաճյուղերի, դեպարտամենտների, ֆակուլտետների ղեկավարները, ռեկտորի նշանակմամբ՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան: Գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներ են, որոնց առաջադրում է համապատասխան մակարդակի ուսանողական խորհուրդը:
34. Համալսարանի գիտխորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է նրա անդամների կեսից ավելին (50% +1): Որոշումները ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
35. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտական խորհրդի անդամների 1/3 պահանջով:
36. Գիտական խորհրդի կազմը հաստատում է ռեկտորը:
37. Գիտական խորհուրդը՝
1) հաստատում է իր կանոնակարգը.
2) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.
3) շնորհում է պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատմանը, ընդունում է պատվավոր կոչումներ, համալսարանի լավագույն բարեկամներ շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ սահմանելու, համալսարանի մեդալով պարգևատրելու մասին որոշումներ.
4) հաստատում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում օրինակելի), ինչպես նաև համալսարանի ուսումնական գործընթացը կանոնակարգող այլ ներքին իրավական փաստաթղթեր.
5) ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է օրենքով սահմանված կարգով ստեղծել, վերակազմակերպել, լուծարել համալսարանի այլ ֆակուլտետներ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, ինչպես նաև ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ.
6) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և

պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրությունների ընթացակարգերը.
7) սահմանված կարգով ընտրում է ֆակուլտետի դեկաններին և ամբիոնի վարիչներին.
8) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը.
9) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.
10) ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ուսման վարձի չափը.
11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ և համալսարանի ներքին այլ կանոնակարգերով սահմանված այլ լիազորություններ.
38. Համալսարանի գիտական խորհուրդը ունի գիտական քարտուղար (այսուհետ՝ քարտուղար), որը ընտրվում է գիտական խորհրդի կողմից:
39. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են գիտական խորհրդի քարտուղարի կողմից:
40. Հյուսիսային համալսարանի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է համալսարանի ռեկտորը:
41. Ռեկտորը ընտրվում կամ նշանակվում է համալսարանի մասնակիցների ժողովի կողմից բաց մրցույթի կարգով (ընտրովի լինելու դեպքում)՝ գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով.
42. Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է մասնակիցների ժողովի կողմից.
43. Ռեկտոր կարող է ընտրվել կամ նշանակվել գիտական աստիճան ունեցող, առնվազն 10 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ ունեցող անձը:
44. Ռեկտորի իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքած աշխատանքային պայմանագրով:
45. Համալսարանի ռեկտորը՝
1) ղեկավարում է համալսարանի կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական և միջազգային գործունեությունը.
2) առանց լիազորագրի գործել համալսարանի անունից (այդ թվում նաև դատարանում), ինչպես նաև կնքել այնպիսի գործարքներ, պայմանագրեր և այլ համաձայնագրեր, որոնց կնքումը սույն կանոնադրությամբ վերապահված չէ համալսարանի մասնակիցների ժողովին կամ համալսարանի կառավարման այլ մարմնի.
3) տնօրինել համալսարանի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.
4) բանկերում բացել հաշվարկային և այլ հաշիվներ.
5) կազմակերպում է համալսարանի գիտական խորհրդի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը.
6) հրավիրում է համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի նիստեր.
7) տարեկան հաշվետվություններ է ներկայացնում համալսարանի մասնակիցների ժողովին.
8) ապահովում է մասնակիցների ժողովի և գիտական խորհրդի որոշումների կատարումը.
9) համալսարանի մասնակիցների ժողովին է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու վերաբերյալ նախագծեր.

10) համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, կանոնակարգերը, համալսարանի ներքին կարգապահական կանոնները, և այլ ներքին իրավական ակտեր.
11) սույն կանոնադրության համաձայն՝ կազմավորում է համալսարանի գիտական խորհուրդը, և կառուցվածքային ստորաբաժանումների կոլեգիալ կառավարման մարմինները, սահմանում է աշխատողների լիազորությունները, պաշտոնական պարտականությունները.
12) արձակում է ուսանողների ընդունելության, հեռացման, վերականգման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր կիրառելու, որակավորման աստիճան շնորհելու, ուսանողական նպաստ հատկացնելու և համալսարանի գործունեությանը վերաբերվող այլ հրամաններ.
13) աշխատանքի է ընդունում և օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատում համալսարանի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր, կազմակերպում է աշխատողների ատեստավորումը.
14) նշանակում և պաշտոնից ազատում է մասնաճյուղի, բաժանմունքի տնօրեններին, պրոռեկտորին (պրոռեկտորներին) և համալսարանի կառուցվածքային այլ ստորաբաժանման ղեկավարին (ղեկավարներին), բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերի.
15) աշխատանքային պայմանագիր է կնքում ընտրված դեկանների, ամբիոնի վարիչների հետ.
16) կասեցնում է համալսարանի գիտական խորհրդի, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման մարմինների այն որոշումները, որոնք չեն բխում նրանց իրավասությունից, հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը.
17) իր բացակայության ժամանակ ռեկտորի պարտականությունները կատարումը հանձնարարում է պրոռեկտորներից մեկին.
18) տալիս է համալսարանի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.
19) իրականացնում է հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և համալսարանի այլ կառավարման մարմիններին չվերապահված լիազորություններ:

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

46. Համալսարանը կարող է ունենալ ինստիտուտներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, դեպարտամենտներ, ֆակուլտետներ, ամբիոններ, վարչություններ, բաժիններ, լաբորատորիաներ, գիտական գրադարան, քոլեջներ, վարժարաններ, դպրոցներ, մանկապարտեզ և այլն: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իրենց կանոնադրություններով և կանոնակարգերով:
47. Համալսարանն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ ուսումնական և գիտական ամբողջություն է, որի միասնությունը ապահովում է ուսումնական, կրթական

կամ գիտահետազոտական գործընթացների կազմակերպումը՝ նրա բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ:

48. Համալսարանը ինքնուրույն է իր կառուցվածքային ձևավորման հարցում:

49. Համալսարանի դեպարտամենտները, ֆակուլտետները գործում են սույն կանոնադրության և իրենց կանոնադրությունների հիման վրա:

50. Դեպարտամենտը, ֆակուլտետը համալսարանի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով:

51. Դեպարտամենտը, ֆակուլտետը ելնելով իրականացվող մանկավարժական, գիտական, ուսումնաօժանդակ աշխատանքներից, ըստ սահմանված չափանիշների՝ մշակում է իր հաստիքացուցակի նախագիծը և ներկայացնում է համալսարանի ռեկտորին:

52. Դեպարտամենտի, ֆակուլտետի հիմնական ստորաբաժանումներն են ամբիոնները: Դեպարտամենտում, ֆակուլտետում կարող են գործել նաև գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական այլ ստորաբաժանումներ:

53. Դեպարտամենտի, ֆակուլտետի կառավարման մարմիններն են դեպարտամենտի, ֆակուլտետի խորհուրդը և դեկանը:

54. Դեպարտամենտի, ֆակուլտետի խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Դեպարտամենտի, ֆակուլտետի խորհրդի կազմի առնվազն 50 տոկոսը պետք է կազմեն ընտրովի անդամները, որոնց թեկնածությունները համամասնորեն առաջադրում են դեպարտամենտի, ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

55. Դեպարտամենտի, ֆակուլտետի խորհուրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են դեկանը՝ որպես նախագահ, նրա տեղակալները, ամբիոնների վարիչները: Դեպարտամենտի, ֆակուլտետի խորհրդի 25 տոկոսը կազմում են ուսանողները, որոնց թեկնածությունները առաջարկում է տվյալ դեպարտամենտի, ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

56. Դեպարտամենտի (ֆակուլտետի) խորհրդի կազմը հաստատում է ռեկտորը:

57. Դեպարտամենտի (ֆակուլտետի) խորհրդի լիազորությունների ժամկետը 3 տարի է: Դեպարտամենտի (ֆակուլտետի) խորհրդի լիազորությունների ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում նոր խորհրդի կազմը:

58. Դեպարտամենտի (ֆակուլտետի) խորհուրդը՝

1) Համալսարանի գիտական խորհրդի կողմից ընդունված օրինակել կանոնադրության հիման վրա ընդունում է դեպարտամենտի (ֆակուլտետի) կանոնադրությունը.
2) լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում նրա գործունեությունը.
3) դեպարտամենտի, ֆակուլտետի կառուցվածքում նոր ամբիոներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, գործունեությունը դադարեցնելու և վերակազմակերպելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում համալսարանի ռեկտորին.
4) համալսարանի կառավարման մարմիններին ներկայացնում է առաջարկություններ պատվավոր կոչումներ շնորհելու, համալսարանի մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, հանրապետական և միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածուներ ներկայացնելու վերաբերյալ.

5) դեպարտամենտից, ֆակուլտետից առաջադրում է համալսարանի գիտական խորհրդի անդամության թեկնածուններ.

6) լուծում է սույն և ֆակուլտետի կանոնադրությունից բխող՝ դեպարտամենտի, ֆակուլտետի ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր.

59. Դեպարտամենտի, ֆակուլտետի խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր ուսումնական կիսամյակում առնվազն 3 անգամ: Դեպարտամենտի, ֆակուլտետի խորհրդում որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել են նրա անդամների թվի ոչ պակաս, քան 2/3-ը:

60. Դեպարտամենտի, ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում և սույն կանոնադրության համաձայն:

61. Դեկանը ընտրվում է համալսարանի գիտական խորհրդի սահմանված կարգով, գիտական խորհրդի կողմից 3 տարի ժամկետով: Ռեկտորը դեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ քվեարկության արդյունքների հիման վրա:

62. Դեպարտամենտի, ֆակուլտետի դեկանը՝

1) ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունը.

2) ապահովում է համալսարանական մարմինների և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների և ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածուներին.

4) սահմանված կարգով համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ուսանողներին հեռացնելու, նրանց ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ.

5) իրականացնում է սույն և ֆակուլտետի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ, կատարում ռեկտորի հանձնարարականները.

63. Ամբիոնները (գիտաուսումնական կենտրոնները, բաժինները, լաբորատորիաները) դեպարտամենտի, ֆակուլտետի կրթագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք ապահովում են ուսումնական գործընթացը, իրականացնում են մեթոդական և գիտական հետազոտություններ: Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը, որն ընտրվում է համալսարանի գիտական խորհրդում՝ 3 տարի ժամկետով՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Ամբիոնի վարիչի թեկնածուններ առաջադրելու, ընտրություններ անցկացնելու և ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգով:

64. Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում են պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ ու դասախոսներ:

65. Մասնաճյուղը համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից է, որը բարձրագույն կրթությամբ մասնագետներ է պատրաստում տվյալ վայրում գտնվող ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների արտադրական գործունեության բնույթից ելնելով:

66. Ներկայացուցչությունը ստեղծվում է մայր համալսարանից հեռու գտնվող խոշոր քաղաքներում, համարվում է համալսարանի առանձնացված ստորաբաժանումը, ներկայացնում է համալսարանի շահերը և իրականացնում է դրանց պաշտպանությունը:

67. Գրադարանը հանդիսանում է համալսարանի ուսումնաօժանդակ և կուլտուր-լուսավորական կարևոր ստորաբաժանումներից մեկը: Նրա նպատակը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը գրականությամբ ապահովելն է, նրանց գիտելիքների կատարելագործմանը և ուսանողների ինքնուրույն աշխատանքի արդյունավետ իրականացմանը նպաստելը:

68. Համալսարանի ներքին կառուցվածքային ստորաբաժանումներն (բաժիններ, վարչություններ, կենտրոններ և այլն) ստեղծվում ու վերացվում են համալսարանի գիտական խորհրդի որոշումով և ռեկտորի համապատասխան հրամանով, և գործում են համապատասխան կանոնադրություններով և կանոնակարգերով:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

69. Սովորողների, այդ թվում՝ օտարերկյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համալսարան ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համալսարանի համապատասխան փաստաթղթերով:

70. Համալսարանում ուսուցումն իրականացվում է առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով, ինչպես նաև վերը նշված ուսուցման ձևերի զուգակցմամբ:

71. Համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկու կիսամյակից բաղկացած ուսումնական տարով, յուրաքանչյուր կիսամյակն ավարտվում է քննաշրջանով:

72. Համալսարանում կիրառվում են ուսումնական պարապմունքների հետևյալ հիմնական տեսակները՝ դասախոսություններ, գործնական, լաբորատոր և անհատական պարապունքներ, սեմինարներ, պրակտիկաներ, խորհրդատվություններ, ստուգողական աշխատանքներ և այլն:

73. Համալսարանում բարձրագույն կրթությունը իրականացվում է բակալավրի և մագիստրոսի հիմնական կրթական ծրագրերով՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Ուսուցման յուրաքանչյուր աստիճանի շրջանավարտներին տրվում է համապատասխան որակավորում և ավարտական փաստաթուղթ (դիպլոմ): Համալսարանում բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

74. Համալսարանում ասպիրանտուրա (հայցորդություն) ընդունելությունն իրականացվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համալսարանի համապատասխան փաստաթղթերի սահմանված կարգերով:

75. Համալսարանում կարող են գործել գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհուրդներ:

76. Համալսարանը կազմակերպում և անցկացնում է գիտաժողովներ, համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ, հրապարակում է գիտական պարբերականներ, ժողովածուներ, մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ:

77. Համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին կարող ն մասնակցել համալսարանի աշխատողները, սովորողները, ինչպես նաև հրավիրված այլ մասնագետներ:
78. Համալսարանում գործում է որակի ներքին ապահովման և վերահսկման համակարգ, որի նպատակը կրթության որակի շարունակական բարելավումն է:

VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

79. Համալսարանի աշխատողները բաժանվում են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական համակազմ (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), գիտական աշխատողներ), վարչական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի:
80. Համալսարանի սովորողներն են ուսանողները, դրսեկները, հայցորդները, ասպիրանտները և հետազոտողները:
81. Համալսարանի աշխատողների և սովորողների իրավունքներն ու պարտականություններն սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ներքին կանոներով, աշխատանքային պայմանագրերով և համալսարանի այլ իրավական ակտերով:
82. Համալսարանի աշխատողն իրավունք ունի՝
1) համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու համալսարանի համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում.
2) մասնակցել համալսարանի գործունեությանը վերաբերվող հարցերի քննարկմանը և լուծմանը.
3) օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ծառայություններից՝ համալսարանի կանոնադրությանը և աշխատանքային պայմանագրերին համապատասխան.
4) ընտրելու ուսումնական գործընթացի դասավանդման մեթոդներ.
5) ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ՝ մասնագիտական գործունեության համար.
6) Հանաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի ներքին իրավական ակտերի սահմանված կարգով բողոքարկելու համալսարանի կառավարման մարմինների և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ընդունած ակտերը.
7) միավորվելու արհմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների մեջ.
8) սահմանված կարգով ստանալու վճարվող կամ չվճարվող արձակուրդ.
9) նախատեսված ժամկետներում և սահմանված կարգով ստանալու աշխատավարձ, հավելավճարներ, ինչպես նաև՝ պարգևատրումներ և խրախուսումներ (ներառյալ դրամական)՝ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով.

10) ըստ նախասիրությունների՝ կազմակերպելու և մասնակցելու համալսարանում անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին:

83. Համալսարանի աշխատողները ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

84. Համալսարանի աշխատողները պարտավոր են՝

1) պահպանել և կատարել սույն կանոնադրությունը, համալսարանի ներքին կարգապահական կանոնների և այլ ներքին իրավական ակտերի պահանջները.
2) կատարել համալսարանի ղեկավար մարմինների օրինական որոշումները.
3) ապահովել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը.
4) մշտապես բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը, առնվազն յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ՝ սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում.
5) սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում և հայրենասիրություն.
6) սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ.
7) սահմանված ժամկետում կատարել բոլոր հանձնարարականներն ու առաջադրանքները.
8) պահպանել և արդյունավետ ու խնայողաբար օգտագործել համալսարանի գույքը.
9) կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և համալսարանի ներքին այլ իրավական ակտերով նախատեսված պարտականությունները:

85. Համալսարանի աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրերով և համապատասխան պաշտոնի անձնագրերով:

86. Համալսարանի ուսանողներ են համարվում սահմանված կարգով համալսարան ընդունված, ռեկտորի կողմից հրամանագրված և բարձրագույն մասնագիտական կրթական որևէ ծրագրով ուսումնառող անձիք:

87. Համալսարանի սովորողը իրավունք ունի՝

1) սեփական հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձևը, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը.
2) ստանալու աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան գիտելիքներ.
3) հաճախելու համալսարանում կազմակերպված դասախոսություններին.
4) մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը.
5) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու եկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան.

6) օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ծառայություններից.
7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին.
8) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և այլ ուսանողական կառույցներում.
9) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական ծրագրերին, գիտաժողովներին և սեմինարներին.
10) բողոքարկելու համալսարանի ղեկավարության հրամանները ու կարգադրությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.
11) ծանոթանալու համալսարանի գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերին և ուսումնական փաստաթղթերին.
12) սահմանված կարգով օգտվելու սովորողների համար համալսարանում սահմանված մի շարք արտոնություններից (ուսման վարձի զեղչեր, ուսման վարձի մասնակի փոխհատուցում, կրթաթոշակներ և այլն).
13) սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ ուսումնական հաստատություն՝ ներառյալ արտասահմանյան պետությունների համալսարաններ.
14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

88. Համալսարանի սովորողները պարտավոր են՝
1) սահմանված ժամկետներում կատարել ուսումնական առջադրանքները.
2) հաճախել դասախոսությունների, սեմինարների, գործնական, արտալսարանային պարապունքների.
3) տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների.
4) հոգատար վերաբերվել համալսարանի գույքին.
5) սահմանված կարգով և չափով կատարել համալսարանի առաջ ունեցած ֆինանսական պարտավորությունները.
6) բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը.
7) պահպանել համալսարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները.
8) ակտիվորեն մասնակցել համալսարանում և համալսարանի կողմից կազմակերպվող կրթա-մշակութային, հասարակական միջոցառումներին:

89. Սովորողների ինքնակառավարման, ներկայացուցչական ընտրովի մարմինը ուսանողական խորհուրդն է, որի կանոնադրությունը հաստատվում սահմանված կարգով:

90. Այն սովորողները, ովքեր չեն կատարում ուսումնական լսարանային և արտալսարանային ծանրաբեռնվածությունը, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն և խախտում են ուսումնական գործընթացի ժամանակացույցը, համալսարանի ներքին կարգապահական կանոնները և համալսարանի առաջ իրենց ֆինանսական պարտավորությունները, համալսարանի

ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական և ֆինանսական տույժերի:

VII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

91. Համալսարանի սեփականությունը կազմում են նրա բալանսում գտնվող շենքերը շինությունները, սարքավորումները, գույքը և մնացած ունեցվածքը:
92. Համալսարանի ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը ուսանողների ուսման վարձի գումարներն են:
93. Համալսարանի ֆինանսական միջոցները կարող են գոյանալ նաև՝
1) սույն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում.
2) միջազգային և տեղական դրամաշնորհային ծրագրերի մասնակցելու արդյունքում.
3) Հայաստանի Հանրապետության և օտարերկյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, կտակած գույքը.
4) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պետական պատվերի, ինչպես նաև այլ նպատակների համար հատկացված միջոցներ:
94. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:
95. Համալսարանի ֆինանսական միջոցներն օգտագործվում են նրա ամենօրյա կենսագործունեության ապահովման, համալսարանի ուսումնանյութական բազայի ամրապնդման համար:
96. Համալսարանում տարվում է համապատասխան գործավարություն, հաշվապահական ու վիճակագրական հաշվառում, սահմանված ձևով կազմվում ու ներկայացվում են ամսական, եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ:

VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

97. Համալսարանի կանոնադրական կապիտալը կազմում է 150,530 (հարյուր հիսուն հազար հինգ հարյուր երեսուն) դրամ՝ 60,000 դրամ (6000/15053 բաժնեմաս), 40,000 դրամ (4000/15053 բաժնեմաս), 40,000 դրամ (4000/15053 բաժնեմաս), 10,160 դրամ (1016/15053 բաժնեմաս), 210 դրամ (21/15053 բաժնեմաս) և 160 դրամ (16/15053 բաժնեմաս) անվանական արժեքներով թվով 6 բաժնետեր:
Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերի երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Համալսարանի կանոնադրական կապիտալը չպետք է պակաս լինի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափից:
Համալսարանի կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են համալսարանի մասնակիցներին, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասի չափը (բաժնեմասը) բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:
98. Համալսարանի մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

99. Համալսարանը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին որոշումն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրում համապատասխան փոփոխությունների պետական գրանցման պահից:
Համալսարանի կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա ամբողջությամբ վճարումից հետո:
Համալսարանի կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է կատարվել համալսարանի գույքի հաշվին, համալսարանի մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին, երրորդ անձանց ավանդների հաշվին:
Համալսարանի մասնակիցների լրացուցիչ կամ երրորդ անձանց ավանդների հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ, որով որոշվում է լրացուցիչ ներդրումների գումարային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները: Այդ որոշմամբ պետք է սահմանվի լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքը, ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացվում է նրա բաժնեմասի անվանական արժեքը: Սահմանված ժամկետի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել (ձայների որակյալ մեծամասնությամբ) լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների, ներդրումների հաշվին ձևավորված կանոնադրական կապիտալի, համալսարանի մասնակիցների բաժնեմասերի չափերի փոփոխման և սույն կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
Լրացուցիչ ավանդները ներդրվում են այդ մասին որոշում ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:
Համալսարանի մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են Օրենքով:
Համալսարանի մասնակցի կամ երրորդ անձի դիմումի հիման վրա համալսարանի կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են Օրենքով:
Համալսարանն իրավունք ունի, իսկ Օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:
Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինասական տարվա ավարտից հետո համալսարանի զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազման մասին և սահմանված կարգով գրանցել դրա նվազումը: Եթե համալսարանի նշված ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի՝ օրենքով սահմանված նվազագույն չափից, համալսարանը ենթակա է լուծարման:
Համալսարանի կանոնադրական կապիտալի նվազեցում թույլատրվում է նրա բոլոր պարտատերերին Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելուց հետո: Համալսարանի պարտատերերն իրավունք ունեն գրավոր տեղեկացումն ստանալու պահից՝ 30 օրվա ընթացքում պահանջել իրենց նկատմամբ համալսարանի պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ պարտավորությունների վաղաժամկետ դադարում կամ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

Համալսարանի կանոնադրական կապիտալի նվազեցում կարող է կատարվել բոլոր մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցմամբ և (կամ) համալսարանին պատկանող բաժնեմասերի մարմամբ:
Կանոնադրական կապիտալի ավելացման կամ նվազեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխության պետական գրանցման պահից:
Համալսարանի կանոնադրական կապիտալում ընկերության մասնկցի մաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է Օրենսգրքով և Օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

IX. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

100. Համալսարանը վերակազմակերպվում (միաձուլվում, միացվում, բաժանվում, առանձնացվում, վերակազմավորվում) և լուծարվում է օրենքով սահմանված կարգով, համալսարանի մասնակիցների որոշմամբ:
101. Լուծարման դեպքում մասնակիցների ժողովը նշանակում է համալսարանի լուծարման հանձնաժողով, հաստատում է լուծարման հաշվեկշիռները (այդ թվում նաև միջանկյալ և ամփոփիչ հաշվեկշիռները):
102. Համալսարանի լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն անցնում է համալսարանի մասնակիցների, կանոնադրական կապիտալում իրենց ունեցաց բաժնեմասին հավասար: